ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ

ՊԱՐՏԱԴԻՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԻՆՉՊԵՍ ՁԵՎԱՎՈՐԵԼ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՇՈՂԻԿ ՁԻԼԻՆԳԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Բովանդակություն----------2
Ներածություն----------3
Գլուխ I
Արժեքային համակարգը որպես սոցիալականացման կարևորագույն գործոն ----5
Գլուխ II
Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ռուսաց լեզվի դասաժամերին
----------9
Եզրակացություն----------17
Օգտագործված
գրականություն----------19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ժամանակի հրամայականով տեղի ունեցող աշխարհաքաղաքական փոփոխությունները տանում են կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման, ինչը ենթադրում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, իսկ փոփոխություններին ճիշտ արձագանքելու, շատ հարցերում նոր մոտեցումներով առաջնորդվելու համար կարևոր է սովորողների արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովումը: Ժամանակակից հասարակության պայմաններում անհատականության ձևավորումն ու կայացումը կապված է նրա հոգևոր ներուժի փոփոխության հետ: Անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման դասական մոտեցումները ուսումնասիրված են և կիրառվում են, սակայն անհատականության ցածր մակարդակը, շրջապատող աշխարհի նկատմամբ կայուն արժեքային վերաբերմունքի բացակայությունը խնդրի լուծման նոր ուղիներ գտնելու ազդակ են դառնում:

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ[1]: Այս առումով կարևոր է նախ և առաջ սովորողների արժեհամակարգի ձևավորումը, որի հիմքերը դրվում են դեռևս նախադպրոցական տարիքում, իսկ հետո արդեն դպրոցական տարիքում՝ սկսած տարրական դասարաններից մինչև միջին և ավագ դպրոց:

Օրեցօր զարգացող գիտությունն ու տեխնիկան մեծապես ազդում են երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա, ուստի շատ կարևոր է, որ նա կրողը դառնա ընդունված արժեքային համակարգի, որպեսզի կարողանա հաջողությամբ լուծել ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և ինքնահիրացվելու խնդիրները: Այդ ամենը հնարավոր է դառնում կազմակերպել ծնողների և ուսուցչի փոխհամաձայնեցված և նպատակային աշխատանքի արդյունքում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել հանրակրթական դպրոցներում սովորողների արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված աշխատանքները:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

· ուսումնասիրել թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականությունը:

· պարզաբանել արժեքային համակարգի դերը սովորողների անհատականության ձևավորման և արժեքային կողմնորոշման հարցում:

· ցույց տալ արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը դասաժամերին:

Հետազոտության օբյեկտը սովորողների արժեքային համակարգն է:

[1] https://escs.am/files/files/2021-05-06/a5ba33a98fcb2c9c0d6ca8bb9b068b90.pdf

Հետազոտության առարկան սովորողների արժեքային համակարգի ձևավորման մանկավարժական պայմանները:

Հետազոտության վարկածն այն է, որ ուսումնական գործընթացում սովորողների արժեքային համակարգի ձևավորումը արդյունավետ կլինի, եթե

- դպրոցում ստեղծվի և պահպանվի բարոյահոգեբանական այնպիսի մթնոլորտ, որը կնպաստի սովորողների արժեհամակարգի ձևավորմանը
- ուսումնասիրվող գործընթացում ուսուցիչը և սովորողները հանդես գան որպես հավասարակիրավ սուբյեկտներ
- հաշվի առնվեն սովորողների տարիքային առանձնահատկությունները:

Հետազոտության մեթոդները: Հետազոտություն կատարելիս կիրառվել են դիտման, վերլուծության, համադրման մեթոդները:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 գլուխներից, եզրակացությունից: Վերջում ներկայացված է օգտագործված գրականության ցանկը:

ԳԼՈՒԽ I

ԱՐԺԵՔԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՑ ԳՈՐԾՈՆ

Արժեհամակարգը ձևավորվում է ինչպես համամարդկային, այնպես էլ տվյալ երկրի, հանրության համար ընդունված և բարձր գնահատվող արժեքների վրա, որոնց հաղորդակից լինելով՝ աշակերտները ընկալում և յուրացնում են այնպիսի գաղափարներ, ինչպիսիք են մարդասիրությունը, հայրենասիրությունը, համերաշխությունը, ազնվությունը, բարեվարքությունը, սովորում են գնահատել մեր հոգևոր, պատմամշակութային հզոր ժառանգությունը, ձևավորվում է նրանց ազգային ինքնագիտակցությունը:

Մեր օրերում նկատելիորեն փոխվել են երեխաների արժեքային կողմնորոշումները, և դա երևում է արդեն՝ տարրական դասարաններից սկսած: Նրանց նախ և առաջ հետաքրքրում են թանկարժեք խաղալիքները, իրերը, մեդիառլորտում և շրջապատող իրականության մեջ գրավիչ ապրանքատեսականու

գլխապտույտ բազմազանությունը, հեռախոսի կամ համակարգչի մեկ մատնազարկով ցանկացած տեղեկության հասանելիությունը...

Հիշենք ավագ սերնդի ժամանակները. արտաքին աշխարհի մասին տեղեկատվությունը մենք ստանում էինք հեռուստացույցի և շատ դեպքերում գրքերի միջոցով, և գրքերն էին դառնում մեզ համար աշխարհը թեկուզ փոքրիկ քայլերով բացահայտելու բանալիները: Ընթերցանությունը ձևավորում էր մեր աշխարհայացքը, ընդլայնում մեր դատողության սահմանները... Իսկ հիմա, ի՞նչ են ստանում այսօրվա սովորողները. նրանց ավելի շատ հետաքրքրում է սեփական հաջողությունն ու բարեկեցությունը, իսկ բարոյական արժեքները՝ մերձավորին օգնելը, ընկերասիրությունը, նրանց համար, ցավոք, երկրորդային նշանակություն են ունենում:

Ժամանակակից սովորողների կյանք են մուտք գործել օտարերկրյա մուլտֆիլմերը, համակարգչային խաղերը, որոնց մեծ մասի հիմքում ընկած են ագրեսիան, դաժանությունը, բռնի ուժի գործադրումը, և երեխաները, գրավվելով այդ ամենով, հեշտությամբ ընդօրինակում այն, ինչը մերժելի է և խախտում է նրանց նոր ձևավորվող արժեհամակարգը: Իսկ հիշենք սովետական մուլտֆիլմերը, որոնցից այնքա՜ն բարություն էր ճառագում, և այնքա՜ն դրական էներգիա էինք ստանում...

Ցավալի փաստ է նաև ծնողների կողմից ոչ բավարար ժամանակի տրամադրումը իրենց երեխաներին: Պատճառաբանելով, որ աշխատում են և գումար վաստակելով՝ հոգում են իրենց երեխաների բարեկեցության մասին՝ նրանք, սակայն, հաշվի չեն առնում այն կարևոր հանգամանքը, որ երեխաները կարիք ունեն ծնողական ուշադրության, սիրո և վերահսկողության, որը ոչ մի այլ բանով փոխարինել հնարավոր չէ: Իսկ եթե ծնողները ուշադիր և հոգատար են իրենց երեխաների հանդեպ, նրանց բաց չեն թողնում իրենց տեսադաշտից ու վերահսկողությունից, երեխաների դաստիարակությունը ճիշտ հիմքերի վրա է դրվում:

Մեր օրերում երեխաների սոցիալականացումը տեղի է ունենում ոչ միայն իրական, այլև վիրտուալ աշխարհում, որը գնալով ավելի մեծ ազդեցություն է ունենում նրանց վրա, ուստի կարևոր է և՛ ծնողների, և՛ ուսուցչի վերահսկողությունը, որպեսզի այն բացասական ազդեցություն չգործի նրանց հուզակամային ոլորտի վրա:

Սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում առանցքային դեր ունի ուսումնական հաստատությունը՝ իրականացվող կրթական գործընթացի կազմակերպման առանձնահատկություններով, ուսուցիչ–աշակերտ–ծնող փոխհարաբերություններով, որոնք միտված են մեկ կարևոր նպատակի՝ ձևավորել բարձր արժեհամակարգով, համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության ու մարդասիրության ոգով դաստիարակված անձ:

Եթե կրտսեր տարիքի սովորողների համար հիմնական ուղենիշները առաջին հերթին իրենց ծնողներն են, իսկ հետո ուսուցիչը, ապա դեռահասների համար, այդ ամենից բացի, կարևոր դեր են խաղում միմյանց և ուսուցչի հետ շփումը, հաղորդակցումը, տեղեկատվության փոխանցումը, համագործակցությունը:

«Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ» [2]:

Արժեքային կողմնորոշումների համակարգը անհատականությունը ձևավորող կարևորագույն բաղադրիչներից է, որը սահմանային դիրք է գրավում նրա մոտիվացիոն պահանջմունքների և անհատականության բովանդակային համակարգի միջև[3], հետևաբար ուսուցիչը պետք է դրանք կարողանա հասցնել սովորողների գիտակցությանը՝ անշուշտ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնատկությունները, դարձնելով նրանց մտածողության առարկա:

Ընդունված արժեքների յուրացումը սկսվում է դեռևս նախադպրոցական տարիքից, ուստի արդեն տարրական դպրոցում ուսուցիչը ձևավորում է սովորողների արժեքային վերաբերմունքը շրջակա միջավայրի երևույթների նկատմամբ, նպաստում նրանց նրանց ինքնագնահատականի, ապագայի տեսլականի ձևավորմանը, օգնում նրանց կառուցել սեփական արժեքների համակարգը: Նկատելի է, որ կրտսեր տարիքում սովորողները ավելի հեշտ են ընդունում այդ ամենը, բայց, ցավոք, իրական կյանքում մարդասիրության, ընկերասիրության, հայրենասիրության, գեղեցիկի, բարու, ազնիվի դրսևորումները շատ դեպքերում աղավաղված են լինում, և դա թուլացնում է երեխաների մոտ նոր ձևավորվող արժեհամակարգի շղթան: Այդ դեպքում նույնպես մեծանում է ուսուցչի կողմից զործադրվող հոգեբանամանկավարժական հնարների ներուժը, որպեսզի արժեքների և իրականության մեջ դրանց ամենատարբեր աղավաղումների միջև չմոլորվեն սովորողները, այլ դրանք համարեն անթույլատրելի բացթողումներ, որոնք կարիք ունեն շտկման, բայց ընդօրինակել չի կարելի:

Ավելի բարդ է միջին և բարձր տարիքի սովորողների արժեհամակարգի ձևավորումը: Նրանք, իհարկե, արդեն որոշակի արժեքների կրող են դեռևս կրտսեր տարիքից, բայց տարիքային տվյալ խմբում նրանց արժեհամակարգը շատ դեպքերում վերածևավորման կարիք ունի՝ կապված մտածողության զարգացման, մտահորիզոնի ընդլայնման, գիտելիքի ներհոսքի հետ, և ուսուցչի խնդիրն է դառնում տեղայնացնել աշխարհի ու մարդկանց մասին նոր ձևավորվող պատկերացումները, ձևավորել նրանց վերլուծական մտածողությունը, գնահատողական վերաբերմունքը, և դա անել զգուշությամբ՝ հաշվի առնելով, որ իր գործ ունի նոր ձևավորվող և ինքնահաստատման ճանապարհին կանգնած անհատների հետ:

Հասարակության տարբեր ոլորտներում արժեքների և արժեքային կողմնորոշումների մասին սովորողների պատկերացումները ձևավորելու և ընդլայնելու նպատակով ուսուցիչը պետք է կիրառի մարդասիրական վերաբերմունքի ձևավորման, անհատական մոտեցման, թիմային աշխատանքի, համակարգված մոտեցման սկզբունքները:

---

[2] Я. Корчак, Избранные педагогические произведения, М., 1979, с 230.

[3] Яницкий М.С. Ценностные ориентации личности как динамическая система.стр.24.

ԳԼՈՒԽ **II**

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է. մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է[4], և այդ կարևորագույն

[4] ՀՀ Սահմանադրություն, http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=5805&lang=arm:

գիտակցումը ուսուցիչը յուրաքանչյուր սովորողի մեջ պետք է ձևավորի դեռևս կրտսեր տարիքից՝ յուրաքանչյուր աշակերտի՝ իբրև անհատականության հանդեպ դրսևորելով հարգալից վերաբերմունք, ստեղծելով հարգանքի և փոխվստահության մթնոլորտ:

Անժխտելի է այն փաստը, որ ձևավորված հասարակական-քաղաքական պայմաններում ընտանիքի հետ մեկտեղ նախ և առաջ դպրոցն է ի զորու ապահովելու ահռող սերնդի բարոյական դաստիարակությունը՝ ձևավորելով մարդասիրության, հայրենասիրության, արժանապատվության բարձր հատկանիշներ՝ ապագայի համար պատրաստելու հայրենասեր, քաղաքակիրթ քաղաքացիներ:

ՀՀԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներում և ծրագրերում յուրաքանչյուր թեմայի բովանդակություն ներառում է որոշակի արժեքների ձևավորում[5], և ուսուցիչը, հիմք ընդունելով չափորոշչային պահանջները, պետք է մանկավարժահոգեբանական ճիշտ մոտեցումներով կառուցի իր դասերը՝ սահմանված նպատակներին հասնելու և որակյալ կրթություն ապահովելու համար:

Բացի մայրենի լեզվից, աշակերտների արժեհամակարգի ձևավորմանը նպաստում են նաև մյուս օտար լեզուները, մասնավորապես ռուսաց լեզուն, որի տիրապետումը քաղաքացու մրցակցային առավելությունն է բարձրագույն կրթություն ստանալիս և մասնագիտական հմտություններ ձևավորելիս:

Աշխարհատնտեսական և աշխարհաքաղաքական մարտահրավերների դիմագրավման ու տարատեսակ գործընթացներ իրականացնելու նպատակով առաջնային է եղել և մնում հայ երիտասարդության կողմից ռուսաց լեզվի ազատ տիրապետումն ապահովելու խնդիրը: Ռուսաց լեզվի ուսուցման նպատակն է սովորողներին նախապատրաստել միջլեզվական և սոցիալ-մշակութային շփումներին, մշակույթների երկխոսությանը, ձևավորել սովորողին՝ որպես միջմշակութային հաղորդակցության սուբյեկտի, որը լեզվի յուրացման ընթացքում ձեռք է բերում գիտելիքներ իր երկրի և ուսումնասիրվող լեզվի երկրի և դրա մշակույթի մասին[6]: Բնականաբար, ընդլայնվում են սովորողների լեզվամտածողության սահմանները, նրանք հնարավորություն են ստանում շփվելու այլալեզու, տվյալ դեպքում՝ ռուսալեզու հանրության հետ, հաղորդակից դառնալու նրա արժեհամակարգին:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները և տվյալ թեման բացատրելուն զուգընթաց, ընտրելով ուսուցման ինտերակտիվ մեթոդներ, առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակության իրականացումը: Այս նպատակով արդյունավետ են անհատական, խմբային քննարկումները, էքսկուրսիան, դասդեկական ժամը,

[5]ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանը հանրակրթական ուսումնական հաստատությունների 3-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ դասարանների «Օտար լեզուներ» ուսումնական բնագավառի ծրագրերը հաստատելու մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=179949:

[6] ՀՀ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ռուսաց լեզվի դասավանդման հայեցակարգ, https://www.e-draft.am/en/projects/415/about:

արտադասարանական միջոցառումները, որոնք օգնում են սովորողներին ինքնաբացահայտվել, ավելի լավ ճանաչել իրար, զարգացնել հաղորդակցական կարողությունները, ձևավորվում են միջանձնային հարաբերություններ, ընկերասիրություն, փոխօգնություն, պատասխանատվության զգացում: Այս ընթացքում նույնպես շատ կարևոր է ուսուցչի դիրքորոշումը, մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ, «առողջ մթնոլորտում առողջ դատողություններ» սկզբունքի պահպանումը: Համագործակցային փոխհարաբերությունների միջոցով համակողմանի մոտեցում է ցուցաբերում աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական դաստիարակության խնդիրների նկատմամբ:

Արժեքային կողմնորոշումների ձևավորումն իրականացվում է նաև տարրական դպրոցում ռուսաց լեզվի դասաժամերին: Երեխաները ճանաչողական բնույթի գիտելիքներ են ստանում ինչպես իրենց հայրենիքի, այնպես էլ Ռուսաստանի և այլ երկրների մասին, քննարկում այնպիսի հարցեր, ինչպիսիք են սերը ընտանիքի, հայրենիքի, մարդկանց, ընտանի կենդանիների նկատմամբ, ընկերությունը, առողջ ապրելակերպը, քրտնաջան աշխատանքը, մեծերի նկատմամբ հարգանքը և խնամքը:

Կրտսեր դպրոցում արդյունավետ են դասի ժամին ռուսերենով երգեր, ոտանավորներ լսելը, մուլտֆիլմեր, թեմատիկ հաղորդումներ դիտելը, որից հետո ուսուցչի օգնությամբ սովորողները սկսում են վերլուծել, հայտնել սեփական կարծիքը, մոտեցումը, իսկ վերջում ընդհանրացնել, անել եզրահանգումներ:

Միջին և բարձր դպրոցում ռուսաց լեզվի դասաժամերին սովորողների արժեհամակարգի ձևավորմանն են նպաստում թեմատիկ շնորհանդեսների ցուցադրումը՝ հատկապես երկու երկրների մշակութային արժեքների համադրմամբ և ազգային ինքնատիպության վերհանմամբ:

Յուրաքանչյուր դասի դաստիարակչական նպատակներից ելնելով՝ կիրառել հետևյալ մեթոդական հնարներից

Զրույցը, որը ուսուցչի և դեռահասների միջև թեմատիկ ուղղվածությամբ երկխոսություն է, և նպատակը վերջիններիցս տեղեկատվություն ստանալն է, իսկ ռուսաց լեզվի դասաժամերին անցկացվող զրույցները, բացի բանավոր հաղորդակցման կարողություններ և հմտություններ զարգացնելուց, նպաստում են նաև սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացմանը, նպաստում փոխադարձ հարգանքի, փոխըմբռնման, ընկերասիրության ձևավորմանը: Զրույցի մեթոդին ենք դիմում ինչպես դասի ընթացքում, երբ կարիք է լինում ավելի մանրամասն քննարկելու տվյալ նյութը, այնպես էլ դասից դուրս՝ լրացուցիչ քննարկման նպատակով:

Բանավեճը, որը գիտական, հանրային բնույթ կրող վեճ է, և դեռահասների համար հետաքրքրական է նրանով, որ ներգրավում է կենդանի զրույցի մեջ, սովորեցնում է արտահայտվել, հայտնել սեփական կարծիքը, լսել և հարգել դիմացինի կարծիքը, մեկնաբանությունները, անել սեփական մեկնաբանություններ ու դիտարկումներ, նպատակն է զարգացնել սովորողների՝ ռուսերենով խոսք կառուցելու, հաղորդակցվելու

կարողությունները, ընդլայնել բառապաշարը, լսել և պատասխանել ռուսերենով տրվող հարցերին, կազմել ինքնուրույն հարցեր, և այդ ամենին զուգահեռ ձևավորել և զարգացնել սովորողների հաղորդակցական շփումները, միջանձնային հարաբերությունները:

Դերային խաղերը, որոնք լայնորեն կիրառվում են դեռահասների հետ տարվող հոգեբանամանկավարժական աշխատանքի ընթացքում և բացահայտում են հնարավորություններ, օրինակ՝ ընդլայնվում է նրանց գիտակցական դաշտը, ամրապնդվում է հավատը սեփական ուժերի հանդեպ, զարգանում են ստեղծագործական, հաղորդակցական կարողությունները, ձևավորում են վարքի գեղագիտական և բարոյական հիմքերը: Ռուսաց լեզվի ժամին դերային խաղեր կարելի է կազմակերպել՝ սովորողներին առաջադրելով ինքնաարտահայտվել տարբեր իրավիճակներում, ստանձնել այս կամ այն հերոսի, հեղինակի, անհատի դերը՝ դրական կամ բացասական կողմերի վերհանմամբ, իսկ հետո մյուսների հետ վերլուծել և անել դիտարկումներ: Բնականաբար, դա օգնում է նրանց ինքնադրսևորվել, ձևավորել սեփական կարծիքն ու վերաբերմունքը:

Բավականին արդյունավետ է սովորողների արժեքային համակարգի ձևավորումը այսպես կոչված՝ իրավիճակային քարտերի միջոցով, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է քննարկման, վերլուծության և լուծման երկու իրավիճակ: Քարտային աշխատանքը զարգացնում է սովորողների՝ ռուսաց լեզվով հաղորդակցվելու կարողություններն ու հմտությունները՝ նպաստելով նրանց արժեքային համակարգի ձևավորմանը:

Կարևոր դեր են խաղում նաև թեմատիկ դասերը, որոնց ընթացքում երեխաները ծանոթանում են ռուս ժողովրդի ոգուն և մշակույթին: Իսկ որպեսզի նրանք ճիշտ ընկալեն օտար մշակույթը, անհրաժեշտ է, որ առաջին հերթին հաղորդակից լինեն հայրենի մշակույթին: Եվ միայն այդ դեպքում նրանք կսովորեն գնահատել ազգային և այլազգի մշակույթը, համամարդկային բարձր արժեքները և հաղորդակից լինել նրանց:

Բացի վերոնշյալ միջոցներից, բոլոր տարիքների սովողների արժեհամակարգի ձևավորման հարցում իր կարևոր ու անփոխարինելի տեղն ունի ընթերցանությունը: Արժեքները երեխաներին ներկայացվում են առաջին հերթին գրական, պատմական հերոսների օրինակով, հետևաբար կարևոր է դասագրքային նյութերի հանգամանալից ուսումնասիրումը, հերոսների վարքագծի վերլուծությունը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտումը: Ընթերցած նյութի վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների գործուն մասնակցություն, այսինքն՝ նրանք հնարավորություն են ունենում ազատ արտահայտելու իրենց կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու, ընկերների հետ քննարկելու, դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին, գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը: Ուսուցիչը պետք է աշխատի ստեղծագործության գաղափարական վերլուծության վրա, վեր հանի նրա ճանաչողական արժեքը:

Սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործում մեծ դեր ունի ռուսերեն տարաբնույթ տեքստերի ընթերցանությունը, որի հիմնական նպատակը նախ՝ տվյալ լեզվով ընթերցելու, նյութը թարգմանելու, հասկանալու, այն վերարտադրելու, հաղորդակցական կարողությունների զարգացումն է, իսկ հետո նաև նրանց ճանաչողության սահմանների ընդլայնումը, միջմշակութային հաղորդակցումը, նոր արժեքների բացահայտումը: Ուսուցիչը պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի տեքստերում հանդիպող առածների և ասացվածքների հետ աշխատանքին, դրանց թարգմանությանը, կապի իրական կյանքին, ընդգծի խրատական բնույթը և արդյունքում հասնի այն բանին, որ սովորողները հասկանան դրանց իմաստը և անհրաժեշտ հետևություններ անեն: Այդ դեպքում արդյունավետ են, օրինակ, մտագրոհի մեթոդը /մինչ դասանյութին անցնելը, ուսուցիչը անհատապես կամ զույգերով կազմել է տալիս սովորողների իմացած տեղեկատվությունը նոր հաղորդվելիք թեմայի վերաբերյալ, այնուհետև բոլոր մտքերը, գաղափարները գրի են առնվում գրատախտակին/: Այս մեթոդի կիրառմամբ հնարավոր է դառնում կերպարների վերլուծությունը, բնորոշող հատկանիշների վերհանումը: Արդյունավետ է քառաբաժան մեթոդը /ուսուցիչը տետրի էջը խաչաձև բաժանում է 4 հավասար մասերի, յուրաքանչյուր մասում գրում քննարկման ենթակա հարցերը, այնուհետև աշակերտներին բաժանում է 4-5 հոգանոց խմբերի, և յուրաքանչյուր խումբ պատրաստում է մեկ հարցի պատասխան/:

Գիտելիքների հաղորդման և սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման նպատակներից ելնելով՝ տարբեր մեթոդների կիրառումը դասերը դարձնում է հետաքրքիր և գրավիչ:

Ներկայացնենք զրույցի մեթոդի կիրառման դեպքերից մեկը 7-րդ դասարանում Եվգենի Պերմյակի «Սպիտակ ագռավը» պատմվածքը անցնելիս.

Զրույցի ընթացքում բացահայտվում են սովորողների վերաբերմունքը, մոտեցումները ինչպես պատմվածքի հերոս սպիտակ ագռավների, այնպես էլ իրենց շրջապատում նմանատիպ մարդկանց մասին:

Պատմվածքի 1-ին մասի հերոս ագռավը ամեն կերպ փորձում էր առանձնանալ մյուսներից, սակայն յուրաքանչյուր անհաջող փորձից հետո միայն ծաղրի էր արժանանում: Ի վերջո, ագռավը, դառնալով սպիտակ, հասնում է ցանկալի արդյունքի. ամենուր աչքի է ընկնում, բայց միայն որոշ ժամանակով: Հետևանքները, սակայն, ագռավի համար կործանարար են լինում:

-Ի՞նչ եք կարծում, երեխանե՛ր, ինչո՞ւ ագռավի՝ աչքի ընկնելու ջանքերը կործանարար եղան: Իսկ ի՞նչ էր անհրաժեշտ հաջողության հասնելու համար:

Սովորողները հայտնում են իրենց կարծիքը, անմիջապես օրինակներ գտնում իրենց տեսադաշտում և սկսում քննադատել՝ ոմանք ագռավին, ոմանք նրան ծաղրողներին:

Այստեղ շատ կարևոր է ուսուցչի ուղղորդում-ընդհանրացումը.

-Իհարկե, մեր շրջապատում մենք տեսնում ենք նմանատիպ մարդկանց, որոնք ուզում են լինել տարբերվող, գերագնահատում են իրենց կարողությունները, բայց այդ ամենը անում են՝ հաշվի չառնելով իրենց

հնարավորությունները: Այլ բան է, եթե նրանք ջանասիրաբար աշխատեն իրենց նպատակին հասնելու ուղղությամբ, հասնեն որոշակի հաջողությունների, և այդ հաջողությունները ակնհայտ դառնան շրջապատի համար: Այդ դեպքում նրանք իսկապես ընդգծված անհատականություն կդառնան և իրենց նպատակասլացությամբ օրինակ կծառայեն շատերի համար:

-Ա՛յ, ագռավի դեպքում էլ, եթե լիներ մեկը, ով կբացատրեր նրան, որ պետք է գործել սեփական հնարավորությունների սահմաններում, հակառակ դեպքում ծաղրի առարկա կդառնա, նա գուցե այդպես չվարվեր: Այստեղ մենք տեսնում ենք, որ ինչպես ագռավի, այնպես էլ մեզ՝ մարդկանց համար բացասական հատկանիշ է հավակնոտությունը /ամբիցիան/, չափից բարձր ինքնագնահատականը, որից պետք է աշխատենք զերծ մնալ:

Ապա հնչեցնում ենք մյուս հարցը, որը նույնպես շատ կարևոր է սովորողների արժեհամակարգի ձևավորման հարցում. «Ինչպե՞ս կվարվեք, երբ հանդիպեք սպիտակ ագռավի»:

«Կարհամարհե՛մ»,«Ուշադրություն չե՛մ դարձնի», –հնչում են պատասխաններ:

–Ամենևին. Հիշե՛ք, որ դուք կարող եք առանց վիրավորելու հասկացնել նրանց, որ ճիշտ ճանապարհ չեն ընտրել, օգնել, որ կարող են այլ բան անել, ինչը իրենց մոտ ավելի լավ է ստացվում, գուցե շատ ավելի լավ, քան մյուսների... Փորձե՛ք նման մարդկանց ճիշտ կողմնորոշել. գուցե նրանք հենց մե՛ր խորհրդի կարիքն ունեն...

Հետևություն

- ☒ Զլինե՛նք եսասեր. եսասիրությունը թույլ չի տալիս հասնել հաջողությունների տվյալ ասպարեզում, քանի որ մեզ թվում է, թե ամեն ինչ գիտենք, ու անհաղթահարելի պատնեշ չկա: Այն հանգեցնում է չափից ավելի ինքնավստահության, իսկ հետո էլ անհաջողությունների
- ☒ Զգերազանցե՛նք սեփական հնարավորությունները
- ☒ Զլինե՛նք հավակնոտ. հավակնոտությունը վանում է մարդկանց մեզանից
- ☒ Ճի՛շտ գնահատենք սեփական հնարավորությունները
- ☒ Լինե՛նք շրջահայաց, սովորենք նաև դիմացինի աչքերով գնահատել մեր կարողությունները, քայլերն ու արարքները
- ☒ Լինե՛նք ըմբռնող, հարգե՛նք դիմացինին, անհրաժեշտության դեպքում օգնե՛նք նրան՝ չվիրավորելով նրա անձը:

Մերօրյա սերնդի վրա, ցավոք, մեծ ազդեցություն է թողնում վիրտուալ տիրույթը, շատ հարցերի տալիս են չտրամաբանված, վերացական, խուսափողական պատասխաններ, այդպիսին է դառնում նաև նրանց արձագանքը ամենատարբեր հարցերում: Միջանձնային կենդանի շփմանը հաճախ փոխարինում են համացանցային շփումը, արհեստական բանականությունը...

Իրականությունը փոխել չենք կարող, բայց կարող ենք սովորեցնել այդ նույն իրականության մեջ ճիշտ կողմնորոշվել, ինքնահաստատվել:

Ռուսաց լեզվի դասաժամերը հետաքրքիր դարձնելու և միաժամանակ սովորողների արժեքային կողմնորոշումներ ձևավորելու նպատակով հաճախ եմ դիմում հենց նույն համացանցի հնարավորություններին. որպես իրավիճակային խնդիր ընտրում եմ իրական կյանքից դրվագներ, որոնցում կան ուսուցիչ-աշակերտ, ծնող-երեխա, աշակերտ-աշակերտ կոնֆլիկտային հարաբերություններ: Դիտելուց հետո սկզբում բանավեճի մեթոդով փորձում ենք վեր հանել բախվող կարծիքները, այնուհետև քննադատական մտածողության մեթոդով վերլուծել տվյալ իրավիճակը, առաջարկել լուծումներ:

Ցուցադրվող դրվագները սովորողներին մեկ քայլ առաջ նայելու, իրենց սխալ քայլերի բացասական հետևանքները պատկերացնելու հնարավորություն են տալիս: Սկսվում է ակտիվ քննարկում, վերլուծում ենք տվյալ կոնֆլիտի դրդապատճառները, այնուհետև լրացնում ենք T-աձև աղյուսակը՝ մի կողմում գրելով այն, ինչը սխալ էր, անընդունելի, իսկ մյուս կողմում՝ այն, ինչը ճիշտ էր և օրինակելի: Արդյունքում ձևավորվում և զարգացվում են աշակերտների այնպիսի արժեքային կողմնորոշիչներ, ինչպիսիք են հավասարակշռվածությունը, զսպվածությունը, մեծահասակներին հարգելու կարողությունը ևն:

Այսպիսով՝ արժեքային համակարգն է ձևավորում սովորողների անհատականությունը, նրանց աշխարհընկալման չափանիշները, հուզակամային ոլորտը, հոգեմտավոր և ինքնատիրապետման գործունեությունը, ուստի ցանկացած մանկավարժ ճիշտ ուղղորդման, ընտրվող մեթոդների նպատակային կիրառման արդյունքում պետք է կարողանա լուծել ինչպես գիտելիքների հաղորդման, ամրապնդման, այնպես էլ սովորողների արժեհամակարգի ձևավորման կարևորագույն խնդիրները՝ կրթելու ու դաստիարակելու համար խելացի, հավասարակշռված, համամարդկային բարձր արժեքներով օժտված անհատներ, որոնք կդառնան ամուր ընտանիքի և ուժեղ հայրենիքի հենասյուները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով սովորողների արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված աշխատանքները դպրոցում՝ սույն հետազոտական աշխատանքում փորձեցինք ներկայացնել արժեքային համակարգը որպես սոցիալականացման կարևորագույն գործոն, այնուհետև անդրադարձանք ռուսաց լեզվի դասաժամերին սովորողների արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված աշխատանքներին:

Ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող արմատական փոփոխությունները անմիջականորեն ազդում են երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նրա առջև ծառանում է ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու խնդիրը, որի լուծման ուղիներ է առաջադրում դպրոցը՝ իր կրթադաստիարակչական հզոր գործառույթներով:

Թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականության ուսումնասիրման արդյունքում վեր հանեցինք արժեքային համակարգի դերը սովորողների անհատականության ձևավորման և արժեքային կողմնորոշումների հարցում կարևորեցինք ծնողի և ուսուցչի դերը, ներկայացրինք սովորողների արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված որոշ աշխատանքների արդյունավետությունը՝ կախված նրանց տարիքային առանձնահատկություններից, կարևորեցինք սովորողներին խրախուսելը, նրանց ճիշտ ինքնագնահատականի ձևավորումը, հասարակության մեջ իրենց տեղի գիտակցումը:

Ամփոփելով կարող ենք ընդգծել, որ ուսուցման գործընթացում հաջողության հասնելու համար ուսուցիչը պետք է սովորողին ընդունի որպես անհատականություն, հաշվի առնի նրա կարծիքն ու մոտեցումները, ապահովի բարոյահոգեբանական համապատասխան մթնոլորտ՝ իր պահվածքով ու դատողություններով օրինակ հանդիսանալով նրա համար: Սովորողների հետ հանդես գալով որպես հավասարաիրավ սուբյեկտներ՝ ուսուցիչը պետք է ստեղծի և պահպանի փոխադարձ հարգանքի և փոխվստահության մթնոլորտը և իր առարկայի ցանկացած թեմայի շրջանակներում աղերսներ գտնի արժեքային կողմնորոշումների ձևավորման կամ զարգացման համար, չէ՞ որ նա՝ որպես նվիրյալ մանկավարժ, ունի մեծագույն առաքելություն՝ ժամանակի մարտահրավերներին ընդառաջ և նրանց պայմաններում կրթել և դաստիարակել համամարդկային, բարոյահոգեբանական բարձր արժեքներով, հավասարակշռված, կենսասեր, մարդասեր և հայրենասեր անհատների, որոնք պիտի դառնան մեր երկրի կայուն ու լուսավոր ապագայի սյուները, և իրենց կայուն արժեհամակարգով կարողանան ճիշտ կողմնորոշվել ցանկացած իրավիճակում, զերծ մնալ կործանարար ազդեցություններից և առողջ դատողությամբ, տրամաբանական վերլուծությունների շնորհիվ կարողանան ճիշտ լուծումներ գտնել ցանկացած իրավիճակում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա.Ս. Մանկավարժություն, Երևան, 2005թ.:
2. Այվազյան Հ., Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում, Երևան, 2014, 48 էջ:
3. Բաբանսկի Յու., Մանկավարժություն, 1-ին հատոր, 1996թ.:
4. Պետրովսկի Ա. Վ./խմբ./, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Երևան, 1977:
5. Алексеев В.Г. Ценностные ориентации личности и проблема их формирования, Москва, 1979, 158стр.
6. Корчак,Я., Избранные педагогические произведения, Москва, 1979, 458 с.
7. https://education.kamerton.global/kategorii-kursov/statya-dlya-kategorij/formirovanie-sistemy-czennostej-i-kartiny-mira-u-rebenka/

8. https://www.bok.am/sites/default/files/2020-12/2.pdf, Անձի արժեհամակարգի ձևավորման աշխարհայացքային նախադրյալները: